ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
31 հունվարի 2025 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 33 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Լևոն Հովհաննիսյանը, Սուրեն Գրիգորյանը և Սարգիս Մադաթյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Շավարշ Գրիգորյանը, աշխատակազմի քարտուղարի տեղակալ Վիլեն Արևշատյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Կամո Արեյանը, Աշոտ Շահբազյանը և Արփենիկ Մուրադյանը, քաղաքապետի մամուլի քարտուղար Հայկ Կոստանյանը, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տարոն Մարգարյանը և կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2025 թվականի հունվարի 31-ի արտահերթ նիստի օրակարգը և ընթացակարգը.

1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:

1. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին**:**

Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի N 95-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՅՑԵՑ - Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 6 անդամ.

1. Արշակ Սարգսյան-Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

2. Արման Բաբաջանյան-Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

3. Գրիգոր Իսկանդարյան-Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

4. Հայկ Սահակյան-Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ

5. Արմենակ Դանիելյան- Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

Ընդմիջում.

Նիստը վերսկսվեց ժամը 11.50-ին:

6. Ալբերտ Մովսեսյան-Երևան քաղաքի ավագանու անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 14 անդամ.

1. Հայկ Գրիգորյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

2. Հայկ Միրզոյան-Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

3. Պեդրո Զարոկյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

4. Նուարդ Վարդանյան-Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

5. Լևոն Լևոնյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

6. Արման Բաբաջանյան-Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

7. Քրիստինե Վարդանյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

8. Վահան Ավագյան-Երևանի ավագանու «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար

9. Դիանա Քերոբյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

10. Արմեն Մկրտչյան-Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ

11. Զինա Չալիկյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

12. Միեր Բեջանյան- Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության քարտուղար

13. Լուսինե Սարգսյան- Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

14. Հայկ Սահակյան- Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ

15. Արմեն Գալջյան-Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար

Ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի «Երևան համայնքում 100 տոկոս համայնքային մասնակցությամբ օպերատորի կողմից ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների սպասարկման դեպքում երթուղիների սպասարկման փոխադրավարձը սահմանելու մասին» N 95-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) Որոշման 1-ին կետի 12.1-ին ենթակետից հետո լրացնել նոր 12.2-րդ ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«12.2) «Մեկ ուղևորություն» ֆիզիկական կամ էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում՝ ձեռքբերման պահից 3 օրվա ընթացքում 1 ուղևորություն կատարելու հնարավորությամբ՝ 150 դրամ.».

2) Որոշման 2-րդ կետից հետո լրացնել նոր 2 . 1-ին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Սահմանել, որ 2025 թվականի հունվարի 1-ից 2025 թվականի փետրվարի 28-ը ներառյալ սույն որոշման 1-ին կետի՝

1) 1-ին ենթակետից մինչև 3-րդ ենթակետում նշված «30 օր» ֆիզիկական քարտ տոմս կամ էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում, նույն ենթակետերով նախատեսված պայմաններով՝ անսահմանափակ քանակով ուղևորությունները կարող են կատարվել ակտիվացման պահից 60 օրվա ընթացքում.

2) 3-րդ ենթակետից մինչև 5-րդ ենթակետում, բացառությամբ 3.5-րդ և 4.5-րդ ենթակետերի, նշված «90 օր» ֆիզիկական քարտ տոմս կամ էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում, նույն ենթակետերով նախատեսված պայմաններով՝ անսահմանափակ քանակով ուղևորությունները կարող են կատարվել ակտիվացման պահից 120 օրվա ընթացքում.

3) 5-րդ ենթակետից մինչև 7-րդ ենթակետում, բացառությամբ 5.5-րդ և 6.5-րդ ենթակետերի, նշված «365 օր» ֆիզիկական քարտ տոմս կամ էլեկտրոնային տոմս ձեռք բերելու դեպքում, նույն ենթակետերով նախատեսված պայմաններով՝ անսահմանափակ քանակով ուղևորությունները կարող են կատարվել ակտիվացման պահից 395 օրվա ընթացքում:»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի փետրվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա: Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով լրացվող նոր 12.2-րդ ենթակետի դրույթները գործում են մինչև 2026 թվականի հունվարի 1-ը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 33, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Կազմեց
Ն. Ղուկասյանը